

3. Պիռհոնեան դպրոցը

Կասկածապաշտութիւնը կամ սկեպտիկութիւնը (Skepticism), կասկածելի ու տարակուսելի կը գտնէ իմացութեան բոլոր կարելիութիւնները եւ որուն համաձայն իրականութեան եւ ճշմարտութեան ճանաչողութիւնը՝ հարցական է, յարաբերական է կամ ընդհանրապէս անկարելի է: Այս ուղղութեան հիմնադիր կը նկատուի յոյն փիլիսոփայ **Պիռհոնը** (Pyrrho, յուն.՝ Pyrrhôn, 360 – 270 մ.թ.ա.), իսկ ուղղութիւնը, իր անունով կը կոչուի Պիռհոնականութիւն (Pyrrhonism):

Կասկածապաշտութիւնը, բարոյագիտութեան հանդէպ եւս ունի վերոյիշեալ նոյն դիրքը. ան կասկածամտութեամբ կը մօտենայ օրինակ, շատերու կողմէ ընդունուած *Գերագոյն Բարիի* մը գոյութեան:

4. Ալեքսանդրիոյ Դպրոցը

Ալեքսանդրիա քաղաքը հիմնուած է մ.թ.ա. 331 թուականին, Մեծն Ալեքսանդրի կողմէ: Քաղաքի հիմնադրութենէն մօտ կէս դար ետք, Պտղոմէոս Ա. թագաւոր (Ptolemaios I, 366 – 282 մ.թ.ա.) իր մահուան տարին հիմը կը դնէր Ալեքսանդրիոյ դպրոցին, որ կը կրէր յուն.՝ „*museion*” («մուսաներու տաճար») անունը: Ասիկա, որպէս հաստատութիւն, երբեք չէր նմանէր այլ դպրոցներու: Այստեղ բնակութիւն հաստատած էին գիտնական ուսուցիչները, որոնք կը գործէին՝ որպէս պետական պաշտօնէներ: Անոնք կը զբաղէին իրենց գիտահետազօտական աշխատանքներով եւ միաժամանակ ուսանողներ ունէին: Ալեքսանդրիոյ դպրոցի տրամադրութեան տակ էր, իր ժամանակաշրջանի մեծագոյն երկու մատենադարանները:

Երբ Յունաստան եւ հելլենիստական մշակոյթի երկիրները կ'անցնէին Հռոմէական կայսրութեան հովանիին տակ, Աթէնք եւս, որպէս փիլիսոփայութեան կեդրոն իր տեղը պիտի զիջէր, բայց ոչ թէ Հռոմին, այլ եգիպտական Ալեքսանդրիոյ, ուր արդէն յունա-հելլենական, դպտի-եգիպտական եւ հրեայ-սեմական մտածողութիւնները իրարու կը հանդիպէին:

Մինչ Քրիստոնեայ Միջնադարուն, 529 թուականին, Հռոմի Յուստինիանոս Ա. (Justinian I. 482 – 565 թ.) կայսեր հրամանով կը փակուէր Աթէնքի մէջ գտնուող եւ հեթանոսական կեդրոն նկատուող Պլատոնի հիմնած Ակադեմիան, Ալեքսանդրիոյ դպրոցը դեռ կը շարունակէր յունական դասական ու հելլենիստական փիլիսոփայութեան ուսուցումը: Ալեքսանդրիոյ դպրոցը, ինքը դարեր ետք, իր աւարտին պիտի հասնէր 642 թուականին, արաբական-խալամական արշաւանքներու ժամանակ, երբ խալիֆայ Օմար իբն խատտաբի (Omar ibn Al-khattab, 592 – 634 – 644 թ.) օրով կը գրաւուէր ամբողջ Միջին Արեւելքը, Պարսկաստանն ու Եգիպտոսը:

Ալեքսանդրիոյ դպրոցին առնչուած յայտնի անուն մըն է, ծագումով հրեայ **Փիլոն Ալեքսանդրացին** (Philo of Alexandria, յուն.՝ Philôn, մօտ. 20 մ.թ.ա. – 50 թ.), որ եղած է հելլենիստական շրջանի նշանաւոր փիլիսոփայ եւ Յուդայա-կան կրօնի մեծ աստուածաբան: Ան փորձած է միջնորդը հանդիսանալ Յու-